ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Թադևոսյան Զ., Բադալյան Կ., Հայրապետյան Ա. (2023), ՀՀ երիտասարդների միգրացիայի ընտրանքային հետազոտություն, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 3(3), 129-154,
DOI: 10.52174/29538114_2023.3-129
Ներկայացվել է խմբագրություն՝ 09.11.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 14.11.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 25.12.2023 թ.

ԶՈՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր
https://orcid.org/0000-0003-2598-7238

ԿԻՄԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0002-6898-0055

ԱԼԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0003-1029-3620

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ[1]

Երիտասարդ միգրանտները, լինելով առավել շարժունակ սոցիալական խումբ, կազմում են տարեկան միգրացիոն հոսքերի հիմնական մասը: Դրան նպաստում է նաև աշխարհի առաջատար երկրների կողմից իրականացվող միգրացիոն քաղաքականությունը, որի շրջանակում երիտասարդներին հնարավորություն է տրվում ավելի լավ կյանք ապահովելու իրենց և իրենց ընտանիքների համար. իրականացնել կրթական ձգտումները, զարգացնել մասնագիտական հմտությունները, բավարարել անձնական աճի ցանկությունը՝ արտերկրում անցնելով ամենատարբեր մարտահրավերների միջով և, ի վերջո, հասնել արժանապատիվ կենսակերպի: Միգրացիայի շարժիչ գործոններից հիմնականն առավել գրավիչ աշխատանք գտնելն է: Հենց այդ գործոն

[1] Հարցազրույցների իրականացմանը մեծապես աջակցել են մարզերի մի շարք վարչական շրջանների և գյուղական համայնքների ղեկավարներ, աշխատակազմի այլ պատասխանատուներ, որոնց էլ հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

է վերջին տասնամյակների ընթացքում որոշիչ դերակատարություն ունեցել Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումներին ուղեկցող գործընթացներում:

Բնակչության, հատկապես՝ երիտասարդների միգրացիան ժողովրդագրական կարևորագույն այն գործընթացներից մեկն է, որն էական ազդեցություն է ունենում բնակչության կառուցվածքի փոփոխության, իսկ դրա արդյունքում՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր ցուցանիշների վրա: Վերջին հանգամանքով է պայմանավորված առաջնային հարցումների հիման վրա ՀՀ մարզերից և Երևան քաղաքից արտագաղթած երիտասարդ տարիքի բնակչության սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական այնպիսի բնութագրիչների ուսումնասիրությունը, ինչպիսիք են միգրանտների սեռատարիքային կառուցվածքը, կրթական մակարդակը, արտագաղթի դրդապատճառները, մեկնման նպատակը, արտագաղթի օրինականության հիմունքները, միգրացիայի աշխարհագրական ուղղությունները, վերադարձի մտադրությունը, նրանց կողմից կատարվող դրամական փոխանցումները և այլն:

Հիմնաբառեր. *Երևան, ՀՀ մարզեր, երիտասարդների միգրացիա, աշխատանքային միգրացիա, սոցիալ-տնտեսական հետևանքներ, դրամական փոխանցումներ*

JEL: O15, R23

DOI: 10.52174/29538114_2023.3-129

Ներածություն: 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ աշխարհի երկրների մեծ մասում գրանցվում է միգրացիոն գործընթացների ակտիվացում: Դրանցում տեղի ունեցող զգալի որակական փոփոխություններում, որոնք ուղեկցվում են հմուտ և բարձր որակավորում ունեցող մասնագետների, գիտաշխատողների, ինչպես նաև ուսանողների մեծածավալ արտագաղթով, ավելի ակնհայտ է դրսևորվում միգրացիոն հոսքերի երիտասարդացման միտումը: Այսպես՝ 2020 թվականին 15–34 տարեկան միգրանտների թիվը հասնում էր մոտ 90 միլիոն մարդու, որոնց 36%-ը ներկայացնում էր 15–24 տարիքային խումբը, իսկ 64%-ը՝ 25-34 տարիքային խումբը: Համեմատության համար նշենք, որ 1990 թվականին նույն տարիքային խմբի միգրանտների թիվը հասնում էր 52 միլիոն մարդու, որի 42%-ը 15–24 տարեկաններն էին, իսկ 58%-ը՝ 25–34 տարեկանները[2]:

Չնայած միգրացիան տեղի է ունենում երիտասարդների գործազրկության բարձր մակարդակի և հայրենիքում արժանապատիվ աշխատանք գտնելու հնարավորությունների բացակայության համատեքստում, այնուհանդերձ, կարևոր է արձանագրել նաև այն փաստը, որ երիտասարդությունը տարիքային այն խումբն է, որն ավելի է հակված սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում փոփոխություններին աջակցելուն, ունի նորարարությունների, նախաձեռնողականության մեծ ձգտում: Այդ տեսանկյունից՝ երիտասարդների արտագաղթի բոլոր հետևանքներն ավելի ակնառու են ՀՀ մարզերում: Մարզերի ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները, սոցիալական կայունության ամրապնդումը ուղղակիորեն պայմանավորված են երիտասարդ տարիքի բնակչության առկայութ-

[2] Տե՛ս Knomad paper 41. Youth, Migration and Development: A New Lens for Critical Times, էջ 10, http://surl.li/mudgi

յամբ: Սահմանամերձ բնակավայրերում նրանց արտագաղթը, ի թիվս այլ սպառնալիքների, ծնում է ազգային անվտանգության լուրջ սպառնալիք ևս:

Երիտասարդության շրջանում միգրացիայի պատճառների և հետևանքների ուսումնասիրությունը, ինչպես նաև, համայնքների ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման համատեքստում, միգրացիայի կանխարգելման ուղղությամբ համապատասխան միջոցառումների, գործողությունների մշակումը չափազանց արդիական են: Ուստի, իրականացված հետազոտության նպատակը երիտասարդների միգրացիայի շարժառիթների և բազմաթիվ այլ ցուցանիշների համապարփակ ուսումնասիրությունն է, որը թույլ կտա բացահայտել այն խնդիրները, որոնք հաջորդում են երիտասարդների միգրացիային:

Գրականության ակնարկ: Բնակչության աշխատանքային միգրացիայի հիմնախնդիրների ուսումնասիրությունը մշտապես գտնվել է գիտական տարբեր ուղղությունների՝ քաղաքագիտություն, տնտեսագիտություն, աշխարհագրություն, ժողովրդագրություն, գիտական համայնքների ուշադրության կենտրոնում: Միգրացիայի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական հետևանքների և շարժառիթների հետազոտությունը բացահայտում է երկրների զարգացման անհամաչափությունները, տարբեր տարածաշրջաններում ֆորսմաժորային իրավիճակների հետևանքով մարդկանց՝ իրենց բնակավայրերը լքելու և այլ երկրներում հանգրվանելու բարդությունն ու միտումները:

Առանձնակի ուշադրության է արժանի երիտասարդ միգրանտների ոչ ֆորմալ զբաղվածության թեման, որին անդրադարձ է կատարվել Միավորված ազգերի կազմակերպության՝ «Երիտասարդությունը և 2030 թվականի օրակարգը՝ հանուն կայուն զարգացման» Երիտասարդության համաշխարհային զեկույցում, որն ուրվագծում է երիտասարդների անհամաչափ ներկայացվածությունը ոչ ֆորմալ զբաղվածության մեջ: Այլ կերպ ասած՝ ոչ ֆորմալ զբաղվածության մեջ 15–24 տարիքային խմբի անձանց տեսակարար կշիռը մի քանի անգամ գերազանցում է բնակչության մեջ նշյալ խմբի տեսակարար կշիռը[3]: Վերջինս պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Աշխատանքի շուկա մուտք գործելուն խոչընդոտող հանգամանքներ. երիտասարդները, հատկապես նրանք, ովքեր մուտք են գործում աշխատանքային տարիք, հաճախ հանդիպում են այնպիսի խոչընդոտների, ինչպիսիք են փորձի պակասը կամ անհրաժեշտ հմտությունները:
- Ոչ ֆորմալ աշխատանքի ճկուն գրաֆիկը. երիտասարդները կարող են ընտրել ոչ ֆորմալ զբաղվածությունը՝ հաշվի առնելով դրա ճկունությունը, հատկապես, եթե նրանք միաժամանակ ստանում են կրթություն կամ այլ գործունեությամբ են զբաղված:
- Միգրացիայի մեծ հակում. երիտասարդները, որպես կանոն, առավել հակված են միջավայրի փոփոխության և միգրացիայի, ուստի նաև՝ ռիսկի, քան ավելի ավագ սերնդի ներկայացուցիչները:

[3] Տե՛ս United Nations, 2018. "World Youth Report: Youth and the 2030 Agenda for Sustainable Development.", էջ 46, https://www.un.org/development/desa/youth/wp-content/uploads/sites/21/2018/12/WorldYouthReport-2030Agenda.pdf

Հատկանշական է, որ նույնանման խնդիրներ առկա են նաև ներքին միգրացիայի ճանապարհին ընտրած անձանց պարագայում. դրանք ներկայացված են Ներքին տեղահանման մշտադիտարկման կենտրոնի հետազոտության մեջ[4]:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) 2018 թ. հրապարակված «Տարածաշրջանները մի հայացքով - 2018» զեկույցում նշում է, որ քաղաքներում (մեգապոլիսներում) աշխատավարձերը, որպես կանոն, առավել բարձր են, ուստի նաև դրանով է պայմանավորված միգրացիան և ուրբանիզացիան[5]: Զեկույցում նշվում է, որ մեգապոլիսներում առկա են առավել բարձրակարգ կրթական հաստատություններ, որոնք «ձգում են» երիտասարդներին: Կրթությունն ավարտելուց հետո նրանք ակնկալում են ավելի բարձր աշխատավարձ: Ուստի, ըստ զեկույցի, գյուղ–քաղաք անհավասարության խորացման գործում էական է հենց կրթական հաստատությունների՝ մեգապոլիսներում տեղակայված լինելու հանգամանքը[6]: Սակայն պետք է ընդգծել, որ մեգապոլիսներում կրթական հաստատությունների առկայությունը տարբերակման հիմնական պատճառը չի կարող լինել: Քաղաքներում կենտրոնացված է նաև բարձր որակավորում պահանջող աշխատատեղերի գերակշիռ մեծամասնությունը, իսկ գյուղական բնակավայրերում մարդիկ զբաղված են առավելապես ավանդական-գյուղական կենցաղավարությամբ, ուստի, երիտասարդ միգրանտի տեսանկյունից մեգապոլիսներն առավել խոստումնալից են:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ աշխատուժի միգրացիայի առավել շարժուն խումբը երիտասարդությունն է, հետազոտողների ուշադրությունից չի վրիպում նաև միգրանտների՝ այդ տարիքային խմբի միգրացիայի առանձնահատկությունների ուսումնասիրության խնդիրը: Այսպես՝ «Երիտասարդների միջազգային միգրացիա. առանձնահատկությունները, միտումները, կարգավորման հեռանկարները» հոդվածում հեղինակները քննարկում են երիտասարդների միջազգային միգրացիայի գլոբալ և տարածաշրջանային խնդիրները[7]: Առավել հետաքրքրական է, որ որոշ տարածաշրջաններում բնակչության նվազումը և ծերացումը տեղի է ունենում երիտասարդների կրթական ծառայություններում և տեղական աշխատանքի շուկաներում ներգրավելու աճող անհրաժեշտության պարագայում, կամ հակառակը, երբ երիտասարդությանը կորցնում են նրանց արտագաղթի պատճառով: Ընդգծվում է, որ երիտասարդությունը ձևավորում է տնտեսապես ակտիվ սոցիալական խումբ, որի ծավալն ու որակը էապես ազդում են երկրի զարգացման վրա: Հոդվածում նշվում է, որ միջազգային երիտասարդական միգրացիայի զարգացման գլոբալ միտումները ներառում են միգրանտների և տեղացի բնակչության ընդհանուր թվի մեջ երիտասարդների թվի և տոկոսային մասնաբաժնի ավելացում, ավելի զարգացած տարածաշրջաններում և եկամտի բարձր մակար-

---

[4] Տե՛ս Internal Displacement Monitoring Centre. 2019. "Urban Internal Displacement Due to Conflict and Violence." Geneva: IDMC

[5] Տե՛ս OECD, "Regions and cities at a Glance 2018.", 2018, էջ 66-70, http://surl.li/mudgz

[6] Տե՛ս նույն տեղը:

[7] Տե՛ս **Sardak S. E., Shymanska K.V., Girman A. P., Krupskyi O. P.,** International youth migration: features, tendencies, regulation prospects. Journal Geology, Geography and Geoecology, 30(2), 365-378, http://surl.li/mudgz

դակ ունեցող երկրներում՝ երիտասարդ միգրանտների թվի աճ: Համաշխարհային բանկի գնահատմամբ էլ մինչև 2050 թվականը շուրջ 143 միլիոն մարդ ներքին տեղահանված է դառնալու՝ պայմանավորված բնապահպանական գործոններով[8]:

Վ. Խուդավերդյանն իր «Երիտասարդական միգրացիան ժամանակակից աշխարհում. պատճառներ և հետևանքներ» հոդվածում, ուսումնասիրելով տարբեր տարածաշրջաններում և երկրներում երիտասարդության միգրացիայի պատճառները, նշում է, որ միգրացիոն գործընթացներն առաջացնում և խթանում են մի շարք էթնոսոցիալական խնդիրներ, ինչպիսիք են զուգահեռ մշակույթները կամ օտար էթնիկական միջավայրում զուգահեռ հասարակությունները[9]: Ապրելով համայնքներով՝ օտարերկրացիներն իրենց միկրոմիջավայրում հաճախ մեկուսացվում են շրջակա սոցիալական միջավայրից, բնիկ բնակչության հետ շփումներից: Գոյանում է որոշակի անջրպետ բնիկների և եկվոր էթնիկ խմբերի միջև: Տարիների ընթացքում դա խորանում է, ինչի հետևանքով կողմերի միջև հակամարտություններ են բռնկվում: Դրանք հիմնականում առաջանում են երկու պատճառով. նախ՝ շուկայում մրցակցության սրման, երկրորդ՝ ըստ սոցիալ-մշակութային խնդիրների:

Միգրացիայի միջազգային կազմակերպության Զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ 2012 թվականին ուսումնասիրվել են ՀՀ-ում աշխատանքային միգրացիայի առկա միտումները և քաղաքականության տարբերակները, առաջարկվել են աշխատանքային միգրացիայի տարբեր հիմնահարցերի կարգավորմանն ուղղված լուծումներ[10]: Կարևորվել են աշխատանքային միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանությունը, աշխատաշուկայի միտումներն ու ռազմավարությունները, աշխատանքային միգրացիայի հեշտացմանն ուղղված միջոցառումները, միգրացիայի զարգացման ազդեցությունը և այլն[11]: Զեկույցում լուծումներ էին առաջարկվել Հայաստանի միգրացիոն կառավարման ազգային ռազմավարությունն իրականացնելու համար:

«Միգրացիա. մտորումներ և հետևանքներ» հետազոտությունում ՀՀ ողջ տարածքում իրականացված հարցումների հիման վրա դիտարկվել են բնակչության արտագաղթի հակվածությունները, ըստ որոնց՝ հարցվողները բաժանվել են «վերադարձված էմիգրանտներ» և «չմեկնածներ» խմբերի[12]: Միաժամանակ, այդ խմբերի ներսում առանձնացվել է «պոտենցիալ միգրանտ» խումբը: Հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ պոտենցիալ էմիգրանտների և աշխատանք ունեցող պոտենցիալ էմիգրանտների խմբերում մեկնելու մտադրությունները հիմնականում համասեռ բաշխում ունեն, ուստի, աշխատանք ունենալը էական նշանակություն չունի մեկնելու

---

[8] Տե՛ս World Bank, 2018, "Groundswell: Preparing for Internal Climate Migration". The World Bank.

[9] Տե՛ս **Худавердян В. Ц.,** Молодежная миграция в современном мире: причины и следствия. Знание. Понимание. Умение. N2, 2012, էջ 142-143, http://surl.li/mudhj

[10] Տե՛ս Աշխատանքային միգրացիան Հայաստանում. առկա միտումները և քաղաքականության տարբերակները: Հայաստանում աշխատանքային միգրացիայի կառավարման կարիքների գնահատում, Եր., 2012, էջ 6, http://surl.li/mudhs

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 6:

[12] Տե՛ս **Սարգսյան Հ,, Անտոնյան Ք., Խաչատրյան Կ.,** Միգրացիա. մտորումներ և հետևանքներ, Եր., Հեղինակային հրատարակություն, 2013, էջ 20-21:

վերաբերյալ որոշում կայացնելու համար[13]: Միևնույն ժամանակ, հարցումները ցույց են տվել, որ պոտենցիալ էմիգրանտները 18–30 տարիքային խմբում գտնվողներն են, և նրանք առավելապես նախընտրում են երկարաժամկետ հեռանկարային հնարավորություններ ստեղծող երկրները[14]:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի շրջանակներում ևս կատարվել է միգրացիայի հիմնախնդիրներին նվիրված հետազոտություն, որում հեղինակները կարևորել են աշխատանքային միգրացիայի ընտրանքային հետազոտությունը[15]: Հարցումներն իրականացնելու համար խումբը մշակել էր երկու հարցաթերթ: Առաջին կամ անմիջական դիտարկման հարցաթերթն ուղղվել է տնային տնտեսությունների այն անդամներին, որոնք ունեցել են արտագաղթելու մտադրություն, երկրորդը՝ անուղղակի դիտարկման հարցաթերթը, ուղղվել է ՀՀ-ից էմիգրացվածներին՝ նրանց սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բնութագրիչները, արտագաղթի նպատակներն ու շարժառիթները բացահայտելու համար: Հեղինակները հանգել են այն եզրակացության, որ «...էմիգրացիոն ներուժը չի կարող անվերջ աճել, քանզի այդ գործընթացում առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերող սեռատարիքային առանձին կահորտաների (կոնտինգենտի) կառուցվածքային տեղաշարժերը կարող են տեղի ունենալ մինչև որոշակի օպտիմալ (որոշ իմաստով նաև կրիտիկական) աստիճանի հասնելը: Այսինքն՝ դա այն իրավիճակն է, երբ արտագաղթելը տնտեսական առումով դառնում է ոչ շահավետ. դոնոր երկրի աշխատանքի շուկայի լարվածության մեղմացման հետևանքով նվազում է գործազրկությունը, աստիճանաբար հանգեցնելով աշխատավարձերի բարձրացմանը, իսկ ռեցիպիենտ երկրներում աշխատանքի շուկան գերհագենում է՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով»[16]:

Տ. Վարդանյանը «Հայաստանից մեկնող աշխատանքային միգրանտների խնդիրների վերհանումը» հոդվածում համապատասխան հարցաթերթի հիման վրա իրականացրել է առաջնային հետազոտություն, որտեղ, ըստ առանձին անհատի, կարևորել է միգրացիայի պատճառների և հետևանքների ուսումնասիրությունը[17]: Կատարված հարցումները հնարավորություն են տվել պարզելու, որ արտագնա աշխատանքի մեկնելը չի հանգեցրել ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի որևէ էական դրական փոփոխության: Ըստ տարիքային խմբերի՝ արտագնա աշխատանքի մեկնելու ցանկություն ունեցողների բաշխման վերլուծությունը ցույց է տվել, որ այդ առումով առավել մեծ տրամադրվածություն ունեն 30-44 տարեկան հարցվածները (նույն տարիքային խմբի 37%-ը), իսկ ամենաքիչը արտագնա աշխատանքի մեկնելու տրամադրված են 55 և ավելի տարեկանները (նույն տարիքային խմբի 9.7%-ը):

---

[13] Տե՛ս նույն տեղը, էջ 23:

[14] Տե՛ս նույն տեղը էջ 29:

[15] Տե՛ս **Թադևոսյան Զ., Հակոբյան Կ., Գալոյան Դ., Աղաջանյան Լ.,** Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., «Տնտեսագետ», 2014, http://surl.li/mudif

[16] Նույն տեղում՝ էջ 20:

[17] Տե՛ս **Վարդանյան Տ.,** Հայաստանից մեկնող աշխատանքային միգրանտների խնդիրների վերհանումը, «Այլընտրանք» գիտական հանդես, N3, 2017, էջ 9-17:

Հետազոտության մեթոդաբանություն: Որպես ընտրանքային հետազոտության դիտարկման օբյեկտ կամ գլխավոր համակցություն հանդես է եկել 15–34 տարեկան երիտասարդ տարիքի բնակչությունը՝ անկախ արտագաղթի նպատակներից, իսկ որպես ընտրանքային հետազոտության դիտարկման միավոր հաստատվել է ոչ թե անհատը (մարդը, բնակիչը կամ քաղաքացին), այլ տնային տնտեսությունը, որից հնարավոր է ստանալ քիչ թե շատ հավաստի ու ամբողջական տեղեկատվություն ոչ միայն հարցվողի տնտեսության բացակա անդամների, այլև լրիվ կազմով բացակա անմիջական հարևան ընտանիքների (տնային տնտեսությունների) մասին:

Հարկ է փաստել, որ երիտասարդության տարիքային խմբի համընդհանուր ճանաչված միջազգային սահմանում գոյություն չունի: Այնուամենայնիվ, վիճակագրական նպատակներով, Միավորված ազգերի կազմակերպությունը, չհակասելով անդամ պետությունների կողմից տրված ցանկացած այլ սահմանմանը, «երիտասարդ» է անվանում 15-24 տարեկան անձանց[18]: Միևնույն ժամանակ, Աշխատանքի միջազգային կազմակերպությունը երիտասարդության աշխատաշուկայի տվյալների վիճակագրությունում (ILOSTAT) ներառում է 15–29 տարեկան երիտասարդների աշխատաշուկայի ցուցանիշները[19]: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը կարևորում է, որ որոշ երիտասարդներ ավելի երկար են մնում կրթության ոլորտում և, հետևաբար, ոլորտն ավելի շատ տեղեկություններ է պարունակում ավարտելուց հետո երիտասարդների զբաղվածության փորձի մասին:

Հաշվի առնելով, որ 30–34 տարիքային խմբի անձինք ևս, որոնք, անցնելով կրթական մի շարք աստիճաններով, ձեռք են բերում ավելի բարձր որակավորում, պահպանում են իրենց բարձր տնտեսական ակտիվությունը և, դրանով իսկ, ավելի բարձր միգրացիոն շարժունությունը, հասարակության ժողովրդագրական իրավիճակի բարելավման գործում ունեն նշանակալի ներուժ՝ սույն հետազոտությունում «երիտասարդ աշխատուժ» հասկացության տակ նպատակահարմար ենք համարել ներառել նաև վերոհիշյալ տարիքային խումբը:

Ընտրանքի ձևավորման մեթոդաբանության մշակման ժամանակ հաշվի չի առնվել բնակչության՝ ըստ որոշ հատկանիշների (բնակության վայր, տնային տնտեսության մեծություն և այլն) բավարար ներկայացուցչություն (ռեպրեզենտատիվություն) ապահովելու պահանջը: Ելնելով վերոնշյալից՝ մշակվել և կիրառվել է ընտրանքի իրականացման յուրահատուկ մեթոդական համակարգ:

ՀՀ մարզերից և Երևան քաղաքից երիտասարդ՝ 15–34 տարեկան միգրանտների մասին հարցումներ իրականացնելու առումով առավել հավաստի ներկայացուցչություն ապահովելու համար հիմք է ընդունվել ՀՀ տնային

---

[18] Տե՛ս ՕՕՀ. Существует ли определение молодежи?, https://www.un.org/ru/global-issues/youth#:~:text=%D0%9E%D0%B1%D1%89%D0%B5%D0%BF%D1%80%D0%B8%D0%B7%D0%BD%D0%B0%D0%BD%D0%BD%D0%BE%D0%B3%D0%BE%20%D0%BC%D0%B5%D0%B6%D0%B4%D1%83%D0%BD%D0%B0%D1%80%D0%BE%D0%B4%D0%BD%D0%BE%D0%B3%D0%BE%20%D0%BE%D0%BF%D1%80%D0%B5%D0%B4%D0%B5%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F%20%D0%B2%D0%BE%D0%B7%D1%80%D0%B0%D1%81%D1%82%D0%BD%D0%BE%D0%B9%20%D0%B3%D1%80%D1%83%D0%BF%D0%BF%D1%8B,%D0%BE%D1%82%2015%20%D0%B4%D0%BE%2024%20%D0%BB%D0%B5%D1%82

[19] Տե՛ս International Labour Organization, ILOSTAT, Statistics on Youth. http://surl.li/mudio

տնտեսությունների հաշվարկային թիվը, որը 760.000 է: Միգրանտների ընդհանուր թվաքանակի մասին վիճակագրությունը ներկայացվում է անձնագրային բաժինների տվյալների հիման վրա, ըստ որի վերջին՝ 2022 թ. վիճակագրական ժողովածուում 2021 թ. դրությամբ հաշվառումից հանված անձանց թիվը 38.932 է[20]: Հաշվառումից հանված 15–34 տարեկանների ընդհանուր թիվը 2021 թ. 17698 էր կամ կազմում էր ընդհանուր միգրանտների 45.5%-ը[21]: Ելնելով վերոնշյալից, ըստ Երևան քաղաքի և մարզերի, հարցումներն անցկացվել են նշված տարիքային խմբի փաստացի գաղթածների մինչև 10%-ի շրջանակներում՝ ակնկալելով արդյունքների բավարար հավաստիություն: Դա ստացված արդյունքների հիման վրա հետագայում միգրացիայի կանխարգելման արդյունավետ միջոցառումներ մշակելու հիմք կհանդիսանա: Մարզերից միգրանտների թվաքանակի ընտրությունը կատարվել է նույն մեթոդաբանությամբ՝ հիմք ընդունելով փաստացի գաղթածների թիվը: Տնային տնտեսությունների ամփոփ (կոմպակտ) բնակեցման սկզբունքի վրա հիմնված կլաստերային ընտրությունը հնարավորություն է ընձեռել նվազագույնի հասցնելու ինչպես հարցվողների, այնպես էլ արտագաղթածների մասով ուսումնասիրվող բոլոր սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների կառուցվածքային գնահատականների ներկայացուցչական սխալները:

Այսպիսով՝ հետազոտական խումբը հարցումներ իրականացրել է 1706 15–34 տարեկան միգրանտների շրջանակներում: Ընտրանքում ընդգրկված և հարցված 1475 տնային տնտեսությունների բաշխումն ըստ գաղթածների թվաքանակի ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հարցված տնային տնտեսությունների բաշխումն ըստ գաղթածների թվի

Հարցված տնային տնտեսությունների քանակը	*Մեկ առանձին տնային տնտեսությունից միգրացվածների թիվը*
1279	1 միգրանտ
172	2 միգրանտ
15	3 միգրանտ
8	4 և ավելի
Ընդամենը՝ 1475	

Տվյալների հավաքագրումն իրականացվել է 2023 թ. հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում: Ստրատաների կամ հաշվային տեղամասերի ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով հարցազրուցավարների համար յուրաքանչյուր մարզի քաղաքային կամ գյուղական համայնքներում տվյալ հարցում քիչ թե շատ տեղեկացված աջակից ունենալու փաստը, որը պայմանավորված է եղել հետազոտական խմբի ֆինանսական ծախսեր կատարելու սահմանափակ հնարավորությամբ:

Վերլուծություն: Հարցումներն իրականացնելու համար մշակվել է հարցաթերթ՝ ուղղված ՀՀ-ից արտագաղթած երիտասարդների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բնութագրիչների բացահայտմանը: Այն բաղկացած է հարցերից՝ տնային տնտեսության բացակա անդամների բնակության վայրը, սեռը, տարիքը, 15–34 տարեկան անձանց թիվը, կրթական մակարդա-

[20] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Միգրացիա, էջ 142, http://surl.li/mudiu

[21] Հաշվարկվել է ըստ վերոբերյալ աղբյուրում ներկայացված տվյալների:

կը և մասնագիտությունը, մեկնման տարեթիվը և մեկնման երկիրը, մեկնման վայրում զբաղվածության կարգավիճակը և գործունեության ոլորտը, մեկնման հիմունքը, նպատակը և դրդապատճառները, Հայաստան վերադառնալու մտադրությունը, հայրենիքում գտնվող բարեկամներին դրամական փոխանցումների փաստը և դրանց մասնաբաժինը՝ այն ստացող տնային տնտեսությունների համախառն եկամտի մեջ դրանց տեսակարար կշիռը:

Հարցվածների բնակության վայրը: Երևան քաղաքից և մարզերից ներգրավված 1706 հարցվածների բաշխումը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հարցվածների բաշխումն ըստ Երևան քաղաքի և մարզերի

Մարզեր	*Հարցվողների բաշխումն ըստ մարզերի*	*Հարցվողների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ*
Երևան	543	31.8
Արագածոտն	75	4.4
Արարատ	139	8.1
Արմավիր	146	8.6
Գեղարքունիք	121	7.1
Լոռի	133	7.8
Կոտայք	149	8.7
Շիրակ	124	7.3
Սյունիք	116	6.8
Վայոց ձոր	62	3.6
Տավուշ	98	5.7

Հարցումներն իրականացվել են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում: Յուրաքանչյուր հաշվային տեղամասում առանձնացվել է դիտարկման ենթարկվող տնային տնտեսությունների կլաստերը (փունջը): Տվյալ հետազոտությունում որպես կլաստեր (կամ սերիա) Երևան քաղաքում ծառայել են որոշակի շենքեր, իսկ մարզերում՝ որոշակի համայնքներ:



Գծապատկեր 1. ***Էմիգրանտների բաշխում ըստ սեռերի՝ մարզերում և Երևան քաղաքում (%)***

Սեռը: Գծապատկեր 1-ում արտացոլված է մարզերում միգրանտների թվաքանակն ըստ սեռերի: Ակնհայտ է, որ միգրանտների թվաքանակում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները: Այսպես՝ Արագածոտնի մարզում միգրանտների 73.3%-ը տղամարդիկ են, իսկ 26.7%-ը՝ կանայք, Արմավիրի մարզում 66.4%-ը՝ տղամարդիկ, 33.6%-ը՝ կանայք, Լոռու մարզում 78.2%-ը՝ տղամարդիկ, 21.8%-ը՝ կանայք: Երևանում և Գեղարքունիքի մարզում միգրանտ տղամարդկանց և կանանց հարաբերակցությունը փաստում է կանանց միգրացիայի ակտիվության աճ: Եթե Երևանում միգրանտ են տղամարդկանց 54.3%-ը, իսկ կանանց՝ 45.7%-ը, ապա Գեղարքունիքում համապատասխան ցուցանիշներն են՝ 52.9 և 47.1 տոկոսը:

Տարիքը: Ըստ առանձին տարիքային խմբերի մեկնածների մասնաբաժնի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երիտասարդների բոլոր տարիքային խմբերում դիտվում է կանանց և տղամարդկանց համամասնության գրեթե նույնական պատկեր (գծապատկեր 2): 25–29 տարիքային խմբում սեռերի համամասնության փոքր փոփոխությունը կարելի է բացատրել տարիքային այդ խմբի երիտասարդների էմիգրացիոն ակտիվության աճով՝ պայմանավորված կրթական, մասնագիտական հմտություններ ձեռք բերելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և այլ հանգամանքներով:

Կրթությունը: Վերոհիշյալ պնդումը կարելի է հիմնավորել միգրանտների կրթական մակարդակների մասին հարցման արդյունքներով, ըստ որոնց՝ բարձրագույն կրթություն ունեն միգրանտ կանանց 56.03%-ը, իսկ տղամարդկանց՝ 33.74%-ը (գծապատկեր 3): Գյուղական բնակավայրերից արտագաղթած արական սեռի աշխատանքային միգրանտները (Արարատի, Արմավիրի, Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերից), որպես կանոն, ունեն միջնակարգ կամ հիմնական կրթություն:



Գծապատկեր 2. ***Միգրանտների բաշխումն ըստ տարիքի և սեռի (%)***

Բարձրագույն կրթություն ունեն միգրանտ կանանց 56.03%-ը, իսկ տղամարդկանց 33.47%-ը, այն դեպքում երբ ընդհանուր միջնակարգ կրթություն ստացած տղամարդկանց թիվը 2.1 անգամ գերազանցում է կանանց թիվը (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ***Միգրանտների բաշխումն ըստ կրթական մակարդակի և սեռի (%)***

Ուսումնասիրվող տարիներին միգրացիայի ամենաշարժուն խմբերը բարձրագույն և ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողներն են, նրանց մասնաբաժինը, հարցվող միգրանտների ընդհանուր թվի համեմատությամբ, ուսումնասիրվող բոլոր տարիներին եղել է ամենաբարձրը, իսկ մինչև 2018 թվականը և 2022 թ-ին այդ ցուցանիշը կազմել է 43.8% (գծապատկեր 4): Հաջորդ ամենամեծ բաժինը միջնակարգ կրթություն ունեցողներինն է (27.9–36.3%): Չնայած հարցվածների ընդհանուր թվում 2023 թ. ութ ամիսների դրությամբ Հայաստանից հեռացել է 114 մարդ, որը կազմում է ընդհանուրի 6.7%-ը (գծապատկեր 5), այնուհանդերձ, ուսումնասիրվող բոլոր տարիների համեմատությամբ միգրանտների կրթական մակարդակներում տեղ գտած օրինաչափություններն այստեղ ևս պահպանվել են: 2023 թ., նախորդ տարիների համեմատությամբ, որոշակիորեն աճել է ընդհանուր հիմնական, թերի բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը:



Գծապատկեր 4. ***Միգրանտների կրթական մակարդակներն ուսումնասիրվող առանձին տարիներին (%)***

Էմիգրացիայի տարին և աշխարհագրական ուղղությունները: Մինչև 2018 թ. ներառյալ, մեկնածների մասին տվյալների ստացումը սահմանափակվել է 2015–2018 թթ. շրջանակներում: Դրանով է պայմանավորված մինչև 2018 թվականը, մնացած տարիների համեմատությամբ, միգրանտների ավելի բարձր տեսակարար կշիռը, որը կազմել է 37.7% (գծապատկեր 5): Այդ մոտեցումը հստակեցրել և պարզեցրել է 15–34 տարեկան էմիգրանտների մասին հարցվողներից առավել ամբողջական տեղեկություն ստանալու գործընթացը:

Համավարակի տարում՝ 2020 թ., նկատելի է արտագաղթի որոշակի անկում, սակայն հետագա տարիներին ակնհայտ է նաև որոշակի աճը: Այնուհանդերձ, համայնքների ղեկավարները պնդում են, որ վերջին տարիներին էմիգրացիոն հոսքերը էապես նվազել են, ավելի ակնառու է ներգաղթը՝ իմիգրացիան:



Գծապատկեր 5. ***Միգրանտների թվաքանակը ուսումնասիրվող առանձին տարիներին (%)***

Հայաստանից միգրանտների մեծաթիվ հոսքերը, ուսումնասիրվող բոլոր տարիներին, ուղղված են եղել դեպի Ռուսաստան (գծապատկեր 6): Այդ ուղղությամբ միգրացիային բնորոշ է սեզոնային աշխատանքը, այն դեպքում, երբ ԱՄՆ և Եվրամիության երկրներ մեկնողներն ավելի երկարատև աշխատանքային միգրանտներն են, մշտական բնակության կամ ընտանիքի վերամիավորման, կրթության նպատակներով մեկնածները: Այսպես՝ ԱՄՆ մեկնած 313 միգրանտների 42.0%-ն ունի մշտական բնակություն հաստատելու մտադրություն, 14.0%-ը՝ ընտանիքի վերամիավորման, աշխատանքի և կրթության նպատակով մեկնածները կազմում են համապատասխանաբար՝ 31.0 և 10.5%: ԵՄ երկրներում հանգրվանած 345 միգրանտների 30.7%-ն ունի աշխատանքի, 26.1%-ը՝ կրթության, իսկ 19,7%-ը և 15.1%-ը՝ մշտական բնակության ու ընտանիքի վերամիավորման նպատակ: Ռուսաստան մեկնած 950 ՀՀ քաղաքացիների 66.7%-ի նպատակը աշխատանքն է, 16.3%-ն ունի մշտական բնակության, իսկ 14.5%-ը՝ ընտանիքի վերամիավորման խնդիր: Կրթության նպատակով այստեղ մեկնածները կազմում են ընդհանուրի ընդամենը 1.6%-ը:



Գծապատկեր 6. ***Միգրացիայի աշխարհագրական ուղղություններն ըստ առանձին տարիների***

Ըստ Երևան քաղաքի և մարզերի՝ 15–34 տարիքային խմբի միգրացիայի աշխարհագրական ուղղությունների ուսումնասիրությունը փաստում է, որ Երևանից մեկնածների 37.5%-ը հանգրվանել է ԱՄՆ-ում, իսկ ԵՄ անդամ երկրներ է մեկնել մոտ 35%-ը: Երևանից մեկնածների համար հաջորդ նախընտրելի ռեցիպիենտ երկիրը Ռուսաստանն է (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

15–34 տարեկանների միգրացիայի աշխարհագրական ուղղություններն ըստ Երևան քաղաքի և մարզերի

Երկիր/մարզ	*Երևան*	*Արագածոտնի*	*Արարատի*	*Արմավիրի*	*Գեղարքունիքի*	*Լոռու*	*Կոտայքի*	*Շիրակի*	*Սյունիքի*	*Վայոց ձորի*	*Տավուշի*	*Ընդհանուր*
ԱՄՆ	204	4	20	28	3	8	10	11	17	7	1	**313**
ԱՊՀ երկրներ	6	0	3	0	0	2	1	2	1	0	0	**15**
Այլ երկրներ	11	0	3	1	4	1	0	5	5	3	2	**35**
Ավստրալիա	4	0	0	0	0	0	0	0	0	0	0	**4**
Եվրոպական միության անդամ երկրներ	190	13	23	46	19	13	8	15	6	6	6	**345**
Եվրոպական այլ երկրներ	13	0	2	0	3	3	0	0	5	1	0	**27**
Կանադա	11	0	0	2	2	0	0	1	1	0	0	**17**
ՌԴ	104	58	88	69	90	106	130	90	81	45	89	**950**
Ընդհանուր	**543**	**75**	**139**	**146**	**121**	**133**	**149**	**124**	**116**	**62**	**98**	**1706**

Ինչ վերաբերում է մարզերին, ապա այստեղ միգրանտները նախապատվությունը տալիս են ավելի մոտ տարածաշրջաններ մեկնելուն, որը, այս պարագայում, Ռուսաստանն է, որտեղ հանգրվանել է հարցվածների ընդհանուր թվի 55.8%-ը: Մարզերից ԱՄՆ և ԵՄ երկրներ մեկնածները կազմում են այդ տարածքներ մեկնածների ընդհանուր թվի համապատասխանաբար՝ 35.9%-ը և 44.9%-ը:

Միգրանտների զբաղվածության կարգավիճակը ժամանման երկրներում: Դիտարկվող ժամանակաշրջանում հարցվածների 53.5%-ը եղել են վարձու աշխատողներ, ինքնազբաղված՝ 19.8%-ը, 4.3%-ը՝ գործատու, ովքեր ժամանման երկրներում ստեղծել են աշխատատեղեր շինարարության և առևտրի ոլորտներում (Ռուսաստան), տրանսպորտի և հասարակական սննդի բնագավառներում (ԵՄ երկրներ և ԱՄՆ): Կրթության նպատակով արտերկիր մեկնել է հարցվողների 10.4%-ը: Հարցման պահին մեր հայրենակիցների 12.0%-ը դեռևս աշխատանք չէր գտել (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. ***Միգրանտների զբաղվածության կարգավիճակը ժամանման երկրներում (%)***

Ժամանման բոլոր երկրներում էմիգրանտների զգալի մասը վարձու աշխատողներ են (գծապատկեր 8): Եթե Ռուսաստան միգրացվածների 58.3%-ն է վարձու աշխատող, ապա ԱՄՆ-ում և ԵՄ երկրներում այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 49.8% և 44.4%: Ավստրալիա մեկնած 4 հայրենակիցներից երկուսը սովորողներ են, մեկը գործատու է, մյուսը՝ ինքնազբաղված: Գործազրկության ամենացածր մակարդակը եվրոպական այլ երկրներում և ՌԴ-ում է: Ինքնազբաղվածների տեսակարար կշիռը մեծ է Կանադա և ԱՊՀ այլ երկրներ մեկնածների շրջանում, որը կազմել է համապատասխանաբար՝ 35.3 և 40.0%: ԵՄ երկրներ մեկնած երիտասարդների 25.8%-ի նպատակը մագիստրոսական և հետբուհական կրթություն ստանալն է, որոնք հայտնել են նաև հայրենիք վերադառնալու մտադրության մասին:



Գծապատկեր 8. ***Միգրանտների զբաղվածության կարգավիճակն ըստ առաջին երկրների և տարածաշրջանների (%)***

Միգրանտների մասնագիտությունը: Ուսումնասիրվող տարիներին հարցվողների ընդհանուր թվում նշանակալի է տնտեսագետի, հաշվապահի, մանկավարժի, ճարտարագետի, իրավաբանի մասնագիտություններ ունեցողների թիվը, միաժամանակ մեծ է որևէ մասնագիտության չտիրապետողների (32.2%) և չնշված այլ մասնագիտությունների տիրապետողների (34.1%) բաժինը (գծապատկեր 9): Այլ մասնագիտությունների նշման տակ ներառված են հարյուրից ավելի բանվորական, տեխնիկական, մշակույթի և այլ ոլորտների մասնագիտություններ:



Գծապատկեր 9. ***Միգրանտների մասնագիտությունը ուսումնասիրվող տարիներին (%)***

Էմիգրանտների զբաղվածությունն ըստ գործունեության ոլորտի: Տնտեսության տարբեր ոլորտներում միգրանտների զբաղվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին արտագաղթած մեր

հայրենակիցների 94.3%-ը հանգրվանել են ԱՄՆ-ում, ԵՄ երկրներում և Ռուսաստանում: Ժամանման երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, միգրանտների 34.5%-ը զբաղվածություն է գտել ծառայությունների (ներառյալ՝ սպասարկում) ոլորտում, տրանսպորտի ոլորտում (հիմնականում՝ որպես վարորդ) ներգրավված է միգրանտների 12.8%-ը (աղյուսակ 4): Այլ ոլորտներում զբաղվածները կազմում են ԱՄՆ մեկնածների 34.5%-ը, ովքեր հիմնականում սովորողներ են, ծերերի, երեխաների խնամքի, տնային աշխատանքներում ներգրավված անձինք: ԵՄ անդամ երկրներ մեկնածների գրեթե 49.0%-ը զբաղված է «այլ» ոլորտներում: Նրանք ընտանիքի վերամիավորման հիմքով մեկնածներն են, որոնք խնամում են իրենց երեխաներին, սովորողներ են, ովքեր զբաղված են հետբուհական և մագիստրոսական կրթությամբ, նաև անձինք, ովքեր մեկնել են անօրինական հիմունքներով և տնային աշխատանքներում ներգրավված անձինք են:

Աղյուսակ 4

Միգրանտների աշխատանքային զբաղվածությունը ժամանման երկրում՝ ըստ տնտեսության ոլորտների

Երկիր/տնտեսության ոլորտ	Առևտուր	Արդյունաբերություն	Ծառայություններ (ներառյալ՝ սպասարկման ոլորտ)	Շինարարություն	Տրանսպորտ	Ֆինանսական (ներառյալ՝ բանկային)	Այլ	Ընդամենը
ԱՄՆ	25	11	108	11	40	10	108	**313**
ԱՊՀ այլ երկրներ	5	0	2	2	0	0	6	**15**
Այլ երկրներ	6	2	10	2	0	1	14	**35**
Ավստրալիա	1	0	1	0	0	0	2	**4**
Եվրոպական միության անդամ երկրներ	25	7	87	15	20	22	169	**345**
Եվրոպական այլ երկրներ	4	0	11	4	0	3	5	**27**
Կանադա	4	2	4	1	2	0	4	**17**
Ռուսաստանի Դաշնություն	144	34	192	302	98	11	169	**950**
Ընդամենը	**214**	**56**	**415**	**337**	**160**	**47**	**477**	**1706**

ՌԴ մեկնածները, որոնք հիմնականում աշխատանքային միգրանտներ են, կազմում են ուսումնասիրվողների ընդհանուր թվի 55.7 %-ը: Այստեղ միգրանտների 31.8%-ը զբաղված է շինարարական աշխատանքներում, ծառայությունների ոլորտում ներգրավված է միգրանտների 20.2%-ը, 15.2%-ը՝ առևտրում, այլ աշխատանքներում զբաղվածների բաժինը հասնում է 17.8%-ի: Մարզերից Ռուսաստան մեկնածների վարքագծում նկատելի է միտում, որը կարելի է անվանել «կապակցված միգրացիա»: Այսպես՝ Բերդ խոշորացված համայնքում, Արմավիրի գյուղական որոշ համայնքներում կատարված հարցումները ցույց են տալիս, որ արտագնա աշխատանքի մեկնողների գերակշիռ մեծամասնությունը նման որոշում կայացնում է՝ օգտվելով նախկինում իրենց հայրենակիցների ստեղծած բիզնեսների հնարավորություններից:

Ըստ առանձին մարզերի միգրանտների զբաղվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևանից մեկնածների ¼-ից ավելին աշխատանք է գտել ծառայությունների ոլորտում, այն դեպքում, երբ Արագածոտնի,

Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի մարզերից մեկնածների մեծ մասը ներգրավված է շինարարության ոլորտում, Արմավիրի մարզից մեկնածների 30.1%-ը և Վայոց ձորից մեկնածների 45.2%-ը զբաղված են ծառայությունների և սպասարկման ոլորտում, Տավուշի մարզում գերակշռում են առևտրի ոլորտում զբաղվածները (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

ՀՀ մարզերից մեկնածների զբաղվածությունն ըստ տնտեսության ոլորտների

Մարզը /ոլորտը (%)	*Արդյունաբերություն*	*Գյուղատնտեսություն (մասնավորապես՝ մեքենավարություն)*	*Առևտուր*	*Տրանսպորտ*	*Շինարարություն*	*Ֆինանսական գործունեություն (մասնավորապես՝ բանկային գործունեություն)*	*Այլ*
Երևան	2.6	27.1	9.0	9.6	6.3	6.3	39.2
Արագածոտնի մարզ	8.0	21.3	13.3	2.7	30.7	0.0	24.0
Արարատի մարզ	5.0	24.5	10.8	0.7	33.1	0.7	15.8
Արմավիրի մարզ	1.4	30.1	15.1	6.2	20.5	1.4	25.3
Գեղարքունիքի մարզ	0.8	25.6	9.9	3.3	33.1	0.8	26.4
Լոռու մարզ	5.3	24.1	12.8	5.3	39.8	0.8	12.0
Կոտայքի մարզ	0.7	16.1	12.1	25.5	21.5	0.0	24.2
Շիրակի մարզ	2.4	16.9	9.7	5.6	19.4	3.2	42.7
Սյունիքի մարզ	3.4	18.1	21.6	12.1	25.0	0.0	19.8
Վայոց ձորի մարզ	4.8	45.2	6.5	9.7	16.1	6.5	11.3
Տավուշի մարզ	8.2	17.3	30.6	7.1	16.3	0.0	20.4

Բոլոր մարզերում և Երևան քաղաքում բավականին բարձր է «այլ» զբաղվածություն ունեցող էմիգրանտների տեսակարար կշիռը: Այստեղ, որպես կանոն, ներառված են սովորողները, աշխատանքային տարիք չունեցող անձինք (15-18 տարեկան), ովքեր մեկնել են ընտանիքի մեծահասակ անդամների հետ, առողջապահական, մշակույթի ոլորտների մասնագետները և այլն:

Միգրացիայի օրինականության հիմունքները: Դժվար է միանշանակ գնահատական տալ միգրացիայի օրինական կամ անօրինական ուղիներին, քանի որ մեկ երկրից այլ երկրներ մարդկանց մեկնումը տեղի ունի բացառապես օրինական հիմունքներով: Այլ խնդիր է ռեցիպիենտ երկրում մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու օրինականացումը, հատկապես, երբ դա վերաբերում է աշխատանքային միգրացիային: Այդ տեսանկյունից նպատակահարմար է, հարցման արդյունքներով, օրինական միգրանտ համարել անհատական հրավերով, աշխատանքային պայմանագրով և բնակվելու իրավունքով մեկնածներին, իսկ անօրինական դիտարկել զբոսաշրջային հրավերով, անձնական նախաձեռնությամբ և այլ հիմունքներով մեկնածներին: Ըստ նշված դասակարգման՝ հարցված էմիգրանտներն առավելապես (89.5%-ը) արտագաղթել են օրինական հիմունքներով (գծապատկեր 10):



Գծապատկեր 10. ***Միգրանտների օրինականության հիմունքներն ըստ մարզերի և Երևան քաղաքի (%)***

Նման իրավիճակը հիմնականում բացատրվում է դեպի Ռուսաստան և ԱՊՀ երկրներ միգրացիայի ավելի մեծ ծավալներով: Նշվածն առավել ակնհայտ է Վայոց ձորի և Տավուշի մարզերում, որտեղից էմիգրացիան տեղի է ունեցել բացառապես օրինական հիմունքներով, այն դեպքում, երբ Երևանից մեկնածների 16.6%-ը, Արմավիրի մարզից՝ 23.3%-ը, Շիրակի մարզից՝ 9.7%-ը և Սյունիքի մարզից՝ 10.3%-ը անօրինական միգրանտներ են:

Միգրացիայի նպատակը: Ռուսաստանի Դաշնությանը բաժին է ընկնում ուսումնասիրվող տարիներին աշխատանքային միգրանտների՝ բոլոր ուղղություններով հոսքերի 71.6%-ը, իսկ տարբեր նպատակներով ՌԴ մեկնածների թվաքանակում աշխատանքային միգրանտների բաժինը հասնում է 66.7%-ի (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Միգրացիայի նպատակը՝ ըստ աշխարհագրական ուղղությունների

Երկիրը/մեկնման նպատակը	*Աշխատանք*	*Ընտանիքի վերամիավորում*	*Կրթություն*	*Մշտական բնակություն*	*Այլ*	*Ընդամենը*
ԱՄՆ	98	46	33	131	5	313
ԱՊՀ երկրներ	10	3	0	2	0	15
Այլ երկրներ	19	7	3	6	0	35
Ավստրալիա	0	2	2	0	0	4
ԵՄ անդամ երկրներ	106	52	90	68	29	345
Եվրոպական այլ երկրներ	13	4	3	7	0	27
Կանադա	6	3	1	7	0	17
Ռուսաստանի Դաշնություն	634	138	15	155	8	950
Ընդամենը	886	255	147	376	42	1706

Հենց այստեղ է, որ ԵԱՏՄ երկրների շրջանակներում աշխատանքային միգրացիայի օրինականությունը դառնում է միգրացիայի և՛ խթան, և՛ շարժառիթ: Ռուսաստան մեկնողների թվաքանակում, բոլոր երկրների և տարա-

ծաշրջանների համեմատությամբ, բարձր է նաև ընտանիքի վերամիավորման (54.1%) և մշտական բնակություն հաստատելու (41.2%) նպատակներով մեկնածների տեսակարար կշիռը:

Աշխատանքային միգրացիայի երկրորդ ամենամեծ հոսքերը տեղ են գտել Եվրամիության երկրներում, որտեղ հանգրվանել են աշխատանք գտնելու նպատակով մեկնածների 11.9%-ը և կրթության նպատակով մեկնածների 61.2%-ը: ԱՄՆ-ը ՀՀ-ից արտագաղթածների թվաքանակի առումով երրորդ ռեցիպիենտ երկիրն է: Այդտեղ մշտական բնակության նպատակով մեկնածները կազմում են այդ շարժառիթով մեկնածների 34.8%-ը, աշխատանքային միգրանտներն այդ նպատակով մեկնածների՝ 4.2%-ը, իսկ ընտանիքի վերամիավորման նպատակով մեկնածները՝ 18.0%-ը: Ուսումնասիրվող բոլոր տարիների աշխատանքային միգրանտների 94.6%-ը բաժին է ընկնում ԱՄՆ-ին, ԵՄ երկրներին և Ռուսաստանին:

Որպես կանոն, բոլոր ուսումնասիրվող բնակավայրերից էմիգրացիայի հիմնական նպատակը աշխատանքն է (գծապատկեր 11):



Գծապատկեր 11. ***Միգրացիայի նպատակը՝ ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի (%)***

Աշխատանքային միգրանտները Կոտայքի մարզում կազմում են ընդհանուր մեկնածների 68.5%-ը, հարցվողների շրջանում 60.0% և ավելի աշխատանքային միգրանտներ ունեն Լոռու, Վայոց ձորի, Տավուշի, Արմավիրի և Արագածոտնի մարզերից մեկնածները: Ընդհանուր մեկնածների կառուցվածքում ամենացածրը Երևանից մեկնած աշխատանքային միգրանտների տեսակարար կշիռն է: Մնացած թիրախների համեմատությամբ բավականին բարձր է հարցվածների մշտական բնակություն հաստատելու նպատակը: Եթե Արարատի մարզից մշտական բնակություն հաստատելու նպատակով երկիրը լքել են հարցվածների 31.7%-ը, որն ամենաբարձրն է, ապա ամենացածրը Արարատի մարզից մեկնածների համապատասխան ցուցանիշն է (8.9%): Երևանից, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերից մշտական բնակություն հաստատելու նպատակով մեկնածները կազմում են յուրաքանչյուր մարզի հարցված էմիգրանտների ընդհանուր թվի ¼-ից ավելին, իսկ Գեղար-

քունիքի մարզից ընտանիքի վերամիավորման նպատակով մեկնածները կազմում են հարցվողների ընդհանուր թվի 25.6%-ը: Կրթության նպատակով մեկնածների ամենաբարձր ցուցանիշը Երևանինն է՝ 17.7%, իսկ Տավուշի մարզից այդ նպատակով մեկնածներ չկան:

Արտագաղթի դրդապատճառները: Հայաստանից էմիգրացիայի պատճառներից հիմնականները կապված են զբաղվածության հիմնախնդիրների, ներառյալ, ընդհանուր առմամբ, աշխատատեղերի և, մասնավորապես՝ մասնագիտական աշխատանքի բացակայության, և ամենակարևորը՝ ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինության հետ:

Հարկ է նշել, որ արտերկրում միգրանտ ունեցող տնային տնտեսությունների հարցված անդամներին հնարավորություն էր ընձեռվել նշելու արտագաղթի մինչև 3 դրդապատճառ, ուստի ստորև բերված աղյուսակում դրդապատճառների ընդհանուր թիվը (2389) գերազանցում է հարցվողների թիվը (աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Էմիգրացիայի դրդապատճառներն ըստ պատասխանների քանակի

Արտերկիր մեկնելու (էմիգրացիայի) դրդապատճառները	*Պատասխան-ների քանակը*	*%-ով՝ ընդհանուրի մեջ*
ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը	724	42.4
ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը	444	26.0
Այլ	334	20.0
Հայաստանի զարգացման հեռանկար չեն տեսնում	265	15.5
Պատերազմի վտանգը	126	7.4
ՀՀ-ում մասնագիտական աշխատանք իրականացնելու հնարավորության բացակայությունը	118	6.9
ՀՀ-ում տիրող սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը	104	6.1
ՀՀ-ում որակյալ կրթություն ստանալու սահմանափակ հնարավորություններ կամ հնարավորությունների բացակայությունը	97	5.70
ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դժվարությունը	78	4.6
Անարդարությունը	67	3.9
ՀՀ-ում որակյալ առողջապահական ծառայություններ ստանալու սահմանափակ հնարավորություններ կամ հնարավորությունների բացակայությունը	32	1.90

Աղյուսակ 7-ի տվյալներից նկատելի է, որ էմիգրացիայի պատճառներից ավելի շատ նշվել են «բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը» (42.4%), «նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը» (26.%) և երրորդ՝ թվով ամենամեծը «այլ» պատասխանն է: Հայաստանի զարգացման հեռանկարներ չեն տեսնում 265 հարցվող կամ 15.5%-ը:

Բոլոր պատասխանների մեջ ամենաբարձր հաճախականությունն ունեն «ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ մի-

ջոցներ վաստակելու անհնարինությունը»՝ 29%, «ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը»՝ 18%, «այլ» տարբերակը՝ 13%:

Մինչև 2018 թվականը ներառյալ մեկնածների 20.8%-ը երկիրը լքել է ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինության, իսկ 11.6%-ը՝ ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայության պատճառով, 16.2%-ը նշել է արտագաղթի այլ պատճառ: 2019 թվականին մեկնածների 34.1%-ն է ընտրել «ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը» պատասխանը, 11.6%-ը՝ «ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը», արտագաղթի այլ պատճառ նշել է հարցվողների 17.8%-ը: 2020 թվականին «ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը» պատասխանը ընտրել է հարցվողների 38.2%-ը, «ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը»՝ 12.7%-ը: Արտագաղթի այլ պատճառ է նշել հարցվողների 16.7%-ը:

Հետագա տարիներին ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինության և ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի ու աշխատատեղերի բացակայության պատճառով արտագաղթողների տեսակարար կշիռները նվազել են՝ 2023 թ. հասնելով համապատասխանաբար՝ 18.3 և 13.5%-ի: 2023 թվականին այլ պատճառներով արտագաղթի ցուցանիշը 22.1% է:

Աղյուսակ 8

Էմիգրանտների հետագա միգրացիոն ծրագրերի բաշխումն ըստ մարզերի (%)

	Կվերադառնամ ի վերջո	Հավանաբար չեմ վերադառնա	1-3 տարվա ընթացքում կվերադառնամ	Դժվարանում եմ պատասխանել/ դեռ չեմ որոշել	Չեմ վերադառնա
Երևան	19.9	23.6	10.1	14.4	32.0
Արագածոտնի մարզ	45.3	29.3	13.3	9.3	2.7
Արարատի մարզ	16.5	16.5	24.5	35.3	7.2
Արմավիրի մարզ	47.3	11.6	12.3	15.8	13.0
Գեղարքունիքի մարզ	19.8	23.1	14.9	26.4	15.7
Լոռու մարզ	29.3	14.3	9.8	24.1	22.6
Կոտայքի մարզ	37.6	20.8	19.5	14.1	8.1
Շիրակի մարզ	16.9	29.0	16.9	26.6	10.5
Սյունիքի մարզ	35.3	25.9	10.3	15.5	12.9
Վայոց ձորի մարզ	16.1	29.0	22.6	29.0	3.2
Տավուշի մարզ	32.7	21.4	11.2	24.5	10.2

Էմիգրանտների վերադառնալու մտադրությունը: Միգրանտների 41%-ը հստակ նշել է վերադառնալու մտադրության մասին, 40%-ը տվել է «չեմ վերադառնա», «հավանաբար չեմ վերադառնա» պատասխանները, իսկ 19%-ը դեռևս որոշում չունի: Երևանից արտագաղթածների 55.6%-ն ունի չվերադառնալու մտադրություն, վերադառնալու մտադրություն ունի 30.0%-ը (աղյուսակ 8): ՀՀ մարզերում ռեէմիգրացման ամենաբարձր ներուժն ունի Արմավիրի

մարզը՝ 59.6%, այնուհետև Արագածոտնի՝ 58.6%, Կոտայքի, Սյունիքի և Տավուշի մարզերը. համապատասխանաբար՝ 57.1**%,** 45.6% և 43.9%, իսկ ամենացածր ներուժն ունի Երևանը՝ 30.0**%,** այնուհետև Շիրակի մարզը՝ 33.8%: Հայրենիք վերադառնալու որոշակի ներուժ կարելի է գտնել դեռևս վերադառնալու որոշում չկայացրածների շրջանում, այն հաշվով, որ նրանց փոխարեն նշված պատասխանը տվել են ընտանիքի անդամները՝ չունենալով հավաստի այլ պատասխան:

Դրամական փոխանցումները: Հարցման ենթարկված 1706 միգրանտներից հայրենիքում բնակվող իրենց ընտանիքի անդամներին, հարազատներին դրամական փոխանցումներ կատարում են 889-ը կամ հարցվածների 52.1%-ը: Դրամական փոխանցումների բաժինը ընտանիքի/տնային տնտեսության ընդհանուր եկամտում բաշխվել է այսպես. 282 միգրանտի դրամական փոխանցումները կազմել են հայրենիքում բնակվող ընտանիքի անդամների և հարազատների եկամտի 21–40%-ը, 216 միգրանտինը՝ 41–60%-ը, 105 միգրանտինը՝ 61–80%-ը, 49 միգրանտինը՝ 81–100%-ը, իսկ 237 միգրանտ հայրենիքում բնակվող իր հարազատների եկամտի մինչև 20%-ի չափով է կարողացել գումար տրամադրել (գծապատկեր 12): Վերջինը կարելի է համարել ոչ թե դրամական փոխանցում, այլ օգնություն, որն ունի միջադեպային բնույթ:



Գծապատկեր 12. ***Միգրանտների բաշխումն ըստ ընտանիքի ընդհանուր եկամտում դրամական փոխանցումների բաժնեմասի (%)***

Հարցված միգրանտների՝ իրենց ընտանիքի եկամուտների ձևավորմանը մասնակցության առումով առանձնանում է Երևանը, որտեղ 72 միգրանտ համալրում է ընտանիքի եկամուտների մինչև 20%-ը, 60 միգրանտ՝ 21–40%-ը (գծապատկեր 14): Արմավիրի մարզում 54 միգրանտ է հոգ տանում իր ընտանիքի եկամուտների 21–40%-ի ձևավորման համար, իսկ Լոռու մարզում 52 միգրանտ է գումար փոխանցում իր ընտանիքի եկամուտների մինչև 20%-ի չափով: 41–60%-ով ընտանիքի եկամուտների ձևավորման գործում մասնակցություն ունի Երևանից 38 միգրանտ, 13-ը մասնակցում են 41–60%-ի համալրմանը, 6-ը՝ 81–100%-ի: Եկամուտների 61–80%-ի և 81–100%-ի ձևավորմանը ամենամեծ մասնակցությունն ունեն Կոտայքի մարզից մեկնածները, որոնց թիվը կազմում է համապատասխանաբար՝ 19 և 16 մարդ:



Գծապատկեր 14. ***Եկամուտների կառուցվածքում միգրանտների մասնակցությունն ըստ Երևան քաղաքի և մարզերի (մարդ)***

Եզրակացություն: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է պնդել, որ արտագաղթի անմիջական պատճառը մի կողմից՝ անհատի զարգացման մակարդակի, նրա պահանջմունքների ու հնարավորությունների, մյուս կողմից՝ դրանք բավարարելու պայմանների միջև խզումն է: Հավանական էմիգրանտի մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ այդ խզումը հնարավոր է հանգուցալուծել միայն պետական սահմանները հատելու միջոցով: Էմիգրացիայի հիմնական նպատակը հիմնականում տնտեսական է:

Հետազոտության արդյունքների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ՀՀ առկա բնակչության էմիգրացիոն ներուժը դեռևս սպառված չէ՝ չնայած վերջին տարիներին դիտարկվում է էմիգրացիայի տեմպերի թուլացում: Դա կարելի է բացատրել ընդունող երկրներում՝ հատկապես Ռուսաստանի Դաշնությունում ձևավորված տնտեսական իրավիճակով, որի դեպքում արտագաղթը տնտեսական տեսանկյունից դառնում է ոչ շահավետ: Կարելի է պնդել, որ էմիգրացիան ՀՀ բնակչության համար շարունակում է մնալ որպես գոյատևման և կենսապահովման կարևոր գործոն:

Ռուսաստան մեկնող մեր հայրենակիցների միգրացիային բնորոշ է սեզոնային աշխատանքը, այն դեպքում, երբ ԱՄՆ և Եվրամիության երկրներ մեկնողներն ավելի երկարատև աշխատանքային միգրանտներն են, մշտական բնակության կամ ընտանիքի վերամիավորման, կրթության նպատակներով մեկնածները: Եվրամիության երկրներ մեկնած երիտասարդների ¼-ից ավելին ունի մագիստրոսական և հետբուհական կրթություն ստանալու նպատակ. հայտնել է հայրենիք վերադառնալու մտադրության մասին:

Սույն հետազոտությունը փաստում է միջազգային տնտեսագիտության մեջ ամրագրված կարևոր մեկ օրինաչափություն. ավելի հեռավոր զարգացած տարածաշրջաններ կամ երկրներ միգրանտները տեղափոխվում են ընտանիքներով և կայացնում մշտական բնակության որոշում:

Ժամանման բոլոր երկրներում էմիգրանտների զգալի մասը վարձու աշխատողներ են: Հայաստանից էմիգրացիայի պատճառներից հիմնականները կապված են զբաղվածության հիմնախնդիրների հետ: Բոլոր հարցվածների

պատասխանների մեջ ամենաբարձր հաճախականությունն ունեն «ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը» և «ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը»:

Օգտագործված գրականություն

1. Աշխատանքային միգրացիան Հայաստանում. առկա միտումները և քաղաքականության տարբերակները: ՄՄԿ, Եր., 2012, 155 էջ, http://surl.li/mudhs
2. Թադևոսյան Զ., Հակոբյան Կ., Գալոյան Դ., Աղաջանյան Լ., Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., «Տնտեսագետ», 2014 թ, 79 էջ, http://surl.li/mudif
3. Սարգսյան Հ., Անտոնյան Ք., Խաչատրյան Կ., Միգրացիա. մտորումներ և հետևանքներ, Եր., հեղինակային հրատարակություն, 2013, 70 էջ:
4. Հայաստանում աշխատանքային միգրացիայի կառավարման կարիքների գնահատում, Եր., 2014, 54 էջ, https://sahmanapah.sns.am/file_manager/HRATARAKUTYUN/review_and_needs_assessment_arm.pdf
5. ՀՀ վիճակագրական կոմիտե, Միգրացիա, http://surl.li/mudiu
6. Վարդանյան S. , Հայաստանից մեկնող աշխատանքային միգրանտների խնդիրների վերհանումը, «Այլընտրանք», N3, 2017, ISSN 1829-2828, էջ 9-17: https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/ailyntranq/2017(3).pdf
7. Худавердян В., Молодежная миграция в современном мире: причины и следствия. Знание. Понимание. Умение. N2, 2012, http://surl.li/mudhj
8. ООН. Существует ли определение молодежи?, http://surl.li/mudill
9. International Labour Organization, ILOSTAT, Statistics on Youth. http://surl.li/mudio
10. Internal Displacement Monitoring Centre. 2019. "Urban Internal Displacement Due to Conflict and Violence." Geneva: IDMC, https://www.internal-displacement.org/global-report/grid2019/
11. KNOMAD PAPER 41. Youth, Migration and Development: A New Lens for Critical Times, http://surl.li/mudgi
12. OECD. "Regions and cities at a Glance 2018.", 2018, pp. 66-70, http://surl.li/mudgz
13. Sardak S. E., Shymanska K.V., Girman A. P., Krupskyi O. P., International youth migration: features, tendencies, regulation prospects. Journal Geology, Geography and Geoecology, 30(2), http://surl.li/mudgz
14. United Nations. 2018, World Youth Report: Youth and the 2030 Agenda for Sustainable Development, http://surl.li/mudgn
15. World Bank. 2018. Groundswell: Preparing for Internal Climate Migration.
16. The World Bank, https://www.worldbank.org/en/news/infographic/2018/03/19/groundswell-preparing-for-internal-climate-migration

ЗОЯ ТАДЕВОСЯН
Профессор кафедры международных экономических отношений АГЭУ, доктор экономических наук

КИМА БАДАЛЯН
Доцент кафедры экономической информатики и информационных систем АГЭУ, кандидат экономических наук

АЛЬБЕРТ АЙРАПЕТЯН
Старший преподаватель кафедры международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук

Выборочное исследование молодежной миграции в РА.– Мигранты молодого возраста - будучи наиболее мобильной социальной группой, составляют основную часть ежегодных миграционных потоков. Этому способствуют также осуществляемые ведущими странами мира миграционные политики, в рамках которых молодым людям предоставляется возможность обеспечить лучшую жизнь для себя и своих семей, реализовать образовательные устремления, повысить профессиональные навыки, удовлетворить стремление к личному развитию, преодолевая самые разные проблемы за рубежом и, в конце концов, достичь достойного образа жизни. Одним из основных факторов миграции является поиск наиболее привлекательной работы. Именно этот фактор в последние десятилетия сыграл решающую роль в процессах, сопровождающих экономические реформы Республики Армения. Миграция населения, особенно молодежи, является одним из важнейших демографических процессов, оказывающих существенное влияние на изменение структуры населения, а вследствие этого - на общие показатели социально-экономического развития страны. Последним обстоятельством обусловлено изучение на основе первичных опросов социально-экономических и демографических характеристик молодого населения, эмигрировавшего из марзов РА и Еревана, таких как половозрастная структура мигрантов, уровень образования, мотивы эмиграции, цель миграции, основы законности эмиграции, географические направления миграции, намерение возвращения, осуществляемые ими денежные переводы и т. д.

Ключевые слова: *Ереван, регионы РА, миграция молодежи, трудовая миграция, социально-экономические последствия, денежные переводы*
JEL: O15, R23
DOI: 10.52174/29538114_2023.3-129

ZOYA TADEVOSYAN
Professor at the Chair of International Economic Relations, ASUE, Doctor of Economics

KIMA BADALYAN
Associate Professor at the Chair of Economic Computer Science and Information Systems, ASUE, PhD in Economics

ALBERT HAYRAPETYAN
Senior Lecturer at the Chair of International Economic Relations, ASUE, PhD in Economics

Selective Study of Youth Migration of the RA.– Young migrants, being the most mobile social group, make up the bulk of annual migration flows. This is also facilitated by migration policies implemented by the leading countries of the world, within which young people are given the opportunity to ensure a better life for themselves and their families, realize educational aspirations, improve professional skills, satisfy the desire for personal development - overcoming a variety of problems abroad and, eventually, achieve a decent lifestyle. One of the main factors of migration is the search for the most attractive job. This factor has played a decisive role in the processes accompanying the economic reforms of the Republic of Armenia in recent decades. Migration of the population, especially among young people, is one of the most important demographic processes exerting a significant impact on the change in the structure of the population, and consequently on the overall indicators of socio - economic development of the country. The latter circumstance is due to the study on the basis of primary surveys of the socio-economic and demographic characteristics of the young population, who emigrated from the regions of Armenia and Yerevan, such as the gender and age structure of migrants, the level of education, the motives of emigration, the purpose of migration, the basics of the legality of emigration, geographical directions of migration, the intention to return, the money transfers they make, etc.

Keywords: *Yerevan, the RA regions, youth migration, labor migration, socio-economic consequences, money transfers*
JEL: O15, R23
DOI: 10.52174/29538114_2023.3-129